

Քառասուն. Ս.


Ինքնաշարժային

324
Ր-25


q r u w h u n q r u w h u n MAR 25 1909

N^o 1.

L



u. 2. p. q. u. 3. u. h. u. p. h. g. U. h. n. p. u. h. p. u. n. u. j. h. u. h. g. 20 krou.



374
p-25

11 8 APR 2013

52. 192

374
թ-25

PH
37087

Ա.

Եւրոպական գրականութեան մէջ բազմաթիւ գրքեր կան ուսուցանելու եղանակների մասին, բայց սակաւ են այնպիսիները որոնք խօսում են ոչ թէ ընդհանրապէս ուսուցման, այլ յատկապէս ինքնուսուցման ու ինքնազարգացման մասին: Պարապել ինքնազարգացմամբ նշանակում է ինքն իրան զարգացնել, ինքն իրան ուսուցանել առանց ուրիշների ղեկավարութեան: Եթէ Դուք ամեն օր գնում էք ուսումնարան կամ թէ մէկը գալիս է և Ձեզ դաս տալիս, այս դէպքում սովորաբար ասում են թէ Ձեզ ուսուցանում են, սա չէ համարում ինքնազարգացում: Բայց եթէ Դուք սովորում էք առանց ուսուցչի, ասում են թէ Դուք պարապում էք ինքնակրթութեամբ կամ ինքնազարգացմամբ: Ուրեմն ուսուցումն ու ինքնազարգացումը հեշտութեամբ որոշում են իրարից, սակայն այդ միայն ըստ




3620 84

երևոյթին է ,և եթէ թափանցենք ինչորի խոր-
քը ,բոլորովին ուրիշ բան կը գտնենք :

Իսկապէս ուսուցումն առանց ինքնազար-
գացման ոչ մի արժէք չունի : Ոչ մի բժիշկ
չէ կարող բժշկել հիւանդին ,եթէ սրա օրգա-
նիզմը զրկւած է արդէն ինքնագործական
ընդունակութիւնից ,եթէ նեարդերը ուժա-
սպառ են վերջնապէս ,եթէ հիւանդը ինքնրստ
ինքեան առողջանալու արամազրութիւն չու-
նի : Սմենալաւ բժիշկը ուրիշ բան չէ անում ,
բայց եթէ միայն նպաստումէ հիւանդի ինք-
նարժեքման պրօցէսին : Նոյն երևոյթն է նշ-
մարում վաճառականական գործում . ներ-
քուստ տնտեսապէս քայքայւած վաճառա-
կանին ոչմի կողմնակի օգնութիւն չէ կարող
ոտքի կանգնեցնել . նրա անանկութիւնը ան-
խուսափելի է : Քարձեալ նոյնն է տեղի ունե-
նում բոյսերի շրջանում ,երբ բոյսը կորցրել է
իր կենսունակութիւնը ,այգեպանի բոլոր ջան
քերն ապարդին կանցնեն : Աշակերտը դպրո-
ցի բոյսն է : Սմենաբարեխիղճ ուսուցիչն ան
գամ չէ կարող բան սովորցնել աշակերտին

եթէ սա ինքը արամազիր չէ սովորելու : Ու-
սուցիչը տանջւում է ,հոգին դուրս է գալիս .
յորդորում կամ սպառնում է ,բայց փոքրիկը
անսասան է ժայռի պէս ,ուչինչ չէ սովորում ,
որովհետեւ ներքուստ արամազրութիւն չկայ :
Ս.յս դէպքում ուսուցիչը պիտի աշխատէ ոչ
թէ ուսուցանել ,ուչթէ գիտելիք հաղորդել այլ
պիտի իր սրտի յաւիտեանական կրակով
ջերմացնէ սանիկի սառած սիրտը ,ճշմարտու-
թեան ծարաւ ծագեցնէ ,բժշկէ նրա հոգեկան
տկարութիւնը : Բայց եթէ ուսուցիչը ինքը
կրակ չունի սրտում ,ուզարկէք բօրսա մակ-
լէրութեամբ զբաղւելու : Ճշմարտութեան ծա-
րաւից զրկւած լինումեն երբեմն ամբողջ սե-
րունդներ ,դասակարգեր ,անգամ ամբողջ ազ-
գեր ,Գուք Չեր կաշիից դուրս էք գալիս որ
բան սովորցնէք Չեր խղճուկ ազգին , բայց
նրա գիտակցութեան մէջ բարեփոխութիւն
չէ նկատում . տեսնումեն բայց չեն տեսնում ,
լսումեն բայց չեն լսում . սրանց է վերաբե-
րում աւետարանի անմխիթաբ կոչը թէ . փող
փչեցինք — պար չեկար , սուգ արինք — լաց



չ'եղաք... Այսպիսի դէպքերում Չեր ցանած
գեղեցիկ սերմերը իզուր կըփթեն ապական-
ւած սրտերի գարշելի մթնոլորտում...

Այժմ ընթերցողի համար պարզ կլինի
մեր խօսքը թէ ոչմի ուսուցումն չէ կարող
արժէք ունենալ առանց ինքնագարգացման։
Աւելին կասեմ. ուսուցիչներին և դպրոցներին,
պրօֆէսօրներին և համալսարաններին մենք
միայն երկրորդ տեղն ենք տալիս մտքի կը
թուլեան ասպարիզում. առաջին տեղը պատ
կանումէ ինքնակրթութեան կամ ինքնազար
գացման. թէ դպրոցներում և թէ համալսա-
րաններում մտաւորապէս աւելի առաջադի-
մութեն այն ինքնուրոյն անհատները, որոնք
ոչմի դիպցիպլինի չ'ենթարկուով, գնումեն,
ինչպէս իրանք հասկանումեն. սրանք այժեր
են ոչխարների հօտի մէջ... Եթէ քրքրենք նշ
անաւոր մարդկանց կենսագրութիւնները, կը
տեսնենք որ սրանք մեծագոյն մասամբ ճա
նապարհ են հարթել իրանց համար փշերի
և տատակների միջով գլխաւորապէս ինքնա
գարգացման միջոցով։

Եթէ մեր ժամանակակից երիտասարդից
հարցնէք, թէ արդեօք նա պարապումէ ինք-
նագարգացմամբ, կը պատասխանէ. «այո, միշտ
կարդումեմ լրագիրներ և գրքեր»։ Աւրեմն շա
տերի համար ինքնագարգացման միակ կամ
գոնէ գլխաւոր միջոցը ընթերցանութիւնն է։
Այս կարծիքը մի անուկի մոյրսուրխակ է...

Այն մակերևոյթական զարգացումը, որ քա
ղաքակիրթ աշխարհի պարծանքն է կազմում
հէնց այս մոլորութեան արդիւնքն է։ Ընթեր
ցանութիւն և ընթերցանութիւն... գիշեր-ցե-
րեկ... Մտտած թղթերից են ամենքը սպա-
սում իրանց հոգեկան սնունդը. բուն տի-
եզերքը անուշազրութեան է մատնւած։ Կա-
պոյտ երկնակամարը իր շողշողուն աստղե-
րով, լայնատարած ծովը իր անտունդով թղ-
թերի մէջ է որոնւում։ Ոչոք չէ ուզում ան-
ձամբ թափանցել մարդկային հոգոյ խորհրդ

աւոր խորշերը, իրօք ըմբռնել թէ ինչ է տեղի ունենում սրտի ներքին շերտերի մէջ. ամեն բան արդէն նկարագրելէն տաղանդաւոր վիպագիրները...

Խօրը չը մտածող մարդիկ կարող են կար ծել, թէ մենք ընթերցանութեան դէմ ենք: Ընդհակառակը, մենք համարում ենք ընթերցանութիւնը ինքնազարգացման կարելոր միջոցներէից մէկը, միայն կամենում ենք, որ, ինչպէս ամենմի կուլտուրական բարիք, գիրքն ու լրագիրն էլ գործ ածւի իր իսկական նպատակի համար: Ընթերցանութիւնը ժամանակ անց կացնելու համար չէ, այլ լուրջ գրադմունք է: Սակայն գրածքը չէ կարող տալ մեզ այն կենդանի ու կենսունակ տպաւորութիւնները որ մենք ստանում ենք անմիջապէս իրական կեանքից ու բնութիւնից: () Ըրինակ, մարդ չտես լող անհրաժեշտ է իւրաքանչիւրի համար. չը կարողանալով ճանաչել մարդկանց, մենք ան ընդհատ դժարութիւններ ի կը հանդիպենք. մեզ կը կեղծեն, կը խաբեն, կը շարեցնեն: Թշնամիներին բարեկամներ թեղ կը ընդու-

նենք և մեր իսկական բարեկամներին մեր կը ծրից կը հրենք: Մեծագոյն չարիք է ծագում այն տարաբաղդ հանգամանքից, որ մարդիկ իրար չեն ճանաչում: Եթէ մարդիկ և ազգերը իրար լաւ ճանաչէին, կը վերանային աշխարհից թշնամութիւնները և արիւնհեղութիւնները, որոնք մեծ մասամբ թիւրիմացութիւնների արդիւնք են:

Ինչպէս սովորել մարդ ճանաչելու կարելոր արեւատը, ուրիշ կերպ չենք կարող բայց եթէ զխտելով մարդկանց խօսքը, գործը և լաւ ու վատ քայլերը ուղղակի կեանքի և իրականութեան մէջ: Ճշմարիտ է, այս բոլորը կարող ենք գտնել և գրքերի մէջ, բայց գրքերից ստացած տպաւորութիւնները կլինեն մուսլ, ազօտ, անկենդան... Եւ իսկի չենք էլ կարող հասկանալ մի գրողի ստեղծագործութիւնը, եթէ նոյն տպաւորութիւնները նախապէս կեանքի մէջ ստացած չլինենք. գրածքները յրացնում են այն, ինչ արդէն իրականութիւնից ստացած ենք: Փորձառու ու գիտուն հեղինակների արտայայտութիւնները

աւելի շտկումեն մեր սեփական մտքերը, կա նօնաւորում և դասաւորումեն մեր ժողոված նիւթերը:

Ինչոր ասացինք մասնաւորապէս զրակա- նութեան մասին, վերաբերումէ գեղարւեստի բոլոր ճիւղերին ընդհանրապէս: Գեղարւեստի զանազան ճիւղերի վարպետները ներշնչում են մեզ իրանց զգացումները ու յոյզերը՝ ու մանք գոյների, միւսները հնչիւնների, երրորդ- ները ձևերի ու շարժաձգների միջոցով: Սա կայն այդ բոլոր զգացմունքները ու յոյզերը կը մնան մեզ համար իբր մի անգոյն ու ան համ զանգւած, եթէ նոյն տպաւորութիւններին իրապէս ենթարկուելու դէպքը ինքներս չենք ունեցել: Եթէ մենք չենք սիրել, չենք էլ կարող հասկանալ Բոմէօ ու Ջուլիէտ: Եթէ մեր սրտերում մի—մի փոքրիկ Համլէտ նստած չլինի, մենք չենք կարող ըմբռնել մեծ Համլէտին: Սրանից է, որ նեղ ու ծանր կեանքի դէմ կռիւ չը մղած անհատները գեղեցիկ արւեստների կեղևն են ըմբռնում, փոխանակ ներսը թափանցելու:

Հնարաւոր է արդեօք ինքնազարգացումը ամեն մարդու համար: Բացարձակ ասումներ որ ինքնազարգացումը ամեն մարդու բան չէ: Շատ մեծ նշանակութիւն ունի այն հան զամանքը, թէ ինքնազարգացմամբ պարապող երիտասարդը ինչ հոգեկան տրամադրութիւն ու սրտի կեանք ունի: Մարդը իր էութեամբ ներկայացնում է մի տեսակ հոգեկան հայելի, ուր ցոլանում է ամբողջ տիեզերքը իր ամեն նակարող զօրութեամբ և անհուն գեղեցկութեամբ: Արդ, ինչպէ՞ս են ցոլացնում հայելիները իրանց դէմ գտնուող առարկաները: Այդ կախած է հայելու յատկութիւնից, նրա արժանաւորութեան աստիճանից: Գոյութիւն ունեն բազմատեսակ հայելիներ. հարթ, ուռած, փոս ընկած... Այն նոյնպէս որոշ ձև ունեցող և ձևագուրկ, տձև հայելիներ: Հայելին կարող է լինել պարզ ու յստակ կամ

պղտոր ու անմաքուր և մոայլ :Աւ ահա մի-
կնոյն առարկան բոլորովին տարբեր պատ-
կեր է ստանում զանազան հայելիներէ մէջ :
Ուռած հայելիների մէջ հսկայական ծառե-
քը չնչին թփեր են երևում : Փոս ընկած հա-
յելու մէջ մթեղը ուղտի չափ է դառնում :
Անկանօն հայելու մէջ ամենականօնաւոր ու
սիմմետրիկ առարկան ծովում, այլանդակ-
ւում է գեղեցկուհին կ' սարսափէ տեսնելով
իր չքնաղ դէմքը այս նենգաւոր հայելու
մէջ : Անմաքուր հայելու մէջ բոլոր առարկա-
ները պատկերանում են աղօտ, մթապատ, ան-
որոշ կարծես զիտմամբ իւրդախւած : Միայն
յստակ կազմւածք և հարթ ու հաւասար
մակերևոյթ ունեցող հայելիների մէջ իւրա-
քանչիւր առարկայ ցոլանում է իր իսկա-
կան կերպարանքով ու պարզութեամբ...

Խորը թափանցիր, ընթերցող, չէ՞ որ մարդիկ
նոյնպէս մի-մի հայելի են ներկայացնում,
մերթ ուռած, մերթ փոս ընկած (կենսավհատ)
մերթ նենգասիրտ, մերթ անմաքուր... ինում
են մարդիկ, որոնք իսկի հայելի էլ չեն, այլ

հասարակ ապակու կտորներ, ուր ոչինչ չէ
ցոլանում, այլ լոյսի ճառագայթները մի կող-
մից ներս թափանցելով, միւս կողմից դուրս
են գնում, ստանց որևէ հետք թողնելու չն-
չին ապակու մէջ...

Միմիայն չիտակ ու բիւրեղային նոսրերև
և և ընդունակ ցոլացնելու իր սեղ մէջ
տիեզերական կեանքը իր յափտեկական գորու-
րեամբ ու զօղեցկութեամբ :

Ահա՛ թէ ինչու ենք մենք պնդում, որ
ինքնազարգացումը ամեն մարդու գործը չէ :
Ինքնազարգացման նշանակէտը հոգեկան աշ-
խարհի պայծառ լուսաւորութիւնն է : Ահսե-
լով ինքնազարգացմամբ պարապել, Գուր թե
ակոխում էք հոգեկան լոյսի երկնազմայլ,
սուրբ ասպարէզը : Գուր անխարդախ ճշմար-
տութիւն ու գեղեցկութիւն էք որոնում, բայց
ո՞վ կարող է մտնել այդ սրբազան ասպա-
րէզը սովորական անմաքուր կօշիկներով...
Միայն նամուտ ու երկիրդած սրտով և նոզե
կան տեսչով կարելի է մօտենալ սրբութեան
սեղանին...

Մեզ կը հակառակեն ասելով, թէ շատ անգամ նոյնիսկ ամենախարդախ ու նենգա միտ մարդիկ կարողանումեն բարձրագոյն ու սուս ստանալ համալսարան աւարտել: Մի թէ քիչ կան դիպլոմաւոր բժիշկներ, իրաւագէտներ, ինժինեըներ, մինչև անգամ գրողներ ու սրօֆէսորներ, որոնք սակայն չեն կարող կոչուել իսկապէս արժանաւոր մարդիկ: Մենք կը պատասխանենք, որ մարդ կարող է լինել հմուտ այսուայն մասնագիտութեան մէջ, առանց ունենալու լուրջ մտաւոր զարգացում: Եթէ մի կօշկակար լաւ կօշիկներ է կարում դեռ այդ չէ նշանակում, թէ նա զարգացած մարդ է: Նոյնպէս եթէ մի ճարտարապետ կարողանումէ ծրագրել ու կառուցանել հսկայական շէնքեր, դեռ չէ նշանակում, թէ նա մի զարգացած էակ է: Առհասարակ մասնագէտ լինել որևէ արհեստի, արեւստի կամ հէնց գիտութեան մի ճիւղի մէջ, տակաւին չէ նշանակում զարգացած մարդ լինել: Վարելի է ձեռք բերել շատ գիտելիքներ և դարձեալ մնալ բութ ու անզարգացած...

Գ.

Գուր ունէք մի ընդարձակ գետին: Խոշոր գումար ծախսելով կրել էք տալիս ու դիզում Ձեր գետնի վրա մեծ քանակով գանազան նիւթեր՝ քար, աղիւս, փայտ, երկաթ: Եւ ահա աչքի տակով նայելով Ձեր գետնին, երեւկայումէք թէ արդէն մի շքեղ պալատ ունէք: Ֆայց, սիրելի բարեկամս, ես տեսնում եմ Ձեր գետնի վրա միմիայն քարակոյտ: Քար ու փայտ ունենալ դեռ չէ նշանակում պալատի տէր լինել: Թերեւս բանխմաց ճարտարապետը կըզտնէ, որ Ձեր գետնը չափազանց փխրուն լինելով պիտանի չէ պալատի համար: Լաւագոյն դէպքումն էլ դեռ շատ էք սպասելու, քրտինք պիտի թափուի, սիրտ ու աշխատանք պիտի գործադրուի, որ երբեք պալատը իրականութիւն դառնայ:

Որքան անբաղգ երիտասարդ կայ, որոնց հոգեկան աշխարհը հէնց յիշեալ գետնին է

նման: Մեր հերոսը շատ բան է սովորել, ան-
թիւ տպաւորութիւններ է ստացել, դասա-
բաններ է փոխել, դասախօսութիւն ըսել, թա-
տրօն է յաճախել, րազմաթիւ գրքեր է կար-
դացել, . . . Բայց լուրջ խօսակցութեան բռնե-
ցէք նրա հետ, և Գուր կը յուսահատէք, դի-
զել է իր մտաւոր աշխարհում մեծաբանակ
նիւթ, բայց բոլորը վայրիվերոյ թափած է,
չկայ պլան, չկայ ամուր հիմք, չկայ ստատ. . .
կայ միայն քարեր ու փայտեր՝ անտաշ ու
ծուռումուռ: Նրա հոգեկան աշխարհում գուր
կը որոնէք սրբույթեան մի տաճար, գեղեցկու-
թեան մի կոթող, վեհապանծ մի պալատ. . .
Թերեւս մի համեստ խրճիթ անգամ չը կա
բողանար գտնել՝ քարակոյտ ու փայտակոյտ
և ուրիշ ոչինչ: Անշան բացառութիւնը մի
կողմ, ճէնց այդօրինակ էակներից է բազկա
ցած այսպէս կոչւած, քաղաքակիրթ աշխա-
րի ամբողջ ինտելիգէնցիան. . . Ողբամ՝ գրեզ,
մարդկութեան օրօրան, խղճուկ մոլորակ:

Բայց ի՞նչ զօրութիւն է այն, որ գեղեցիկ
չէնքս է կառուցում հոգեկան աշխարհում:

Այս աներևոյթ զօրութիւնը ճշմարտու-
րեան ծարաւն է:

Ստող մարմնով ու մարդու զուակին յա-
տուկ ունակութիւններով ծնւած մանուկը ա-
մենուրէք կեանք է տեսնում ու կեանք է
որոնում, որովհետև ինքը իր էութեամբ մի
թարմ կեանքի մարմնացումն է: Ոչորի կոր-
ուստը կամ թէ դժբաղդութիւնը ցանկալի չէ
նրան: Կա սիրումէ իր կատուին, իրանց բա-
կի հաւերին, կտուրի ճնճոկներին: Իր ան-
շունչ խաղալիքի մէջ անգամ կեանք է որո-
նում փոքրիկը: Բայց ահա հանդէս է գալիս
նրա առաջ իրականութիւնը բոլորովին ուր-
իշ պատկերով: Փոքրիկը իր շուրջը յաճախ
տխուր երևոյթներ է նկատում: Ընտանիքի
անդամները համերաշխ չեն իրար հետ: Մար-
դիկ մերթ սիրումեն իրար, մերթ առում:
Տան դղերքից մէկը կոչուած ծառայ և ստո-
բազիր դեր է խաղում: Սիրելի փիշիկը մէկ
էլ տեսար ճամփեց փոքրիկ երգիչ—սոխակի
ճիւղից, խեղդեց և կերու: Փոքրիկ երեխայի
համար բացուած հետզհետէ վշտի աշխարհ:

Գեո նախապատմական խաւար դարերում մարդը ըմբռնեց, որ իր համար վիճակած աշխարհը բաւական խղճուկ է իր տեսակի մէջ: Բայց որ գլխաւորն է, մարդը հասկացաւ որ իր կեանքը ու դիրքը մի խորամիտ հանելուկ է: Տարաբաղդ վայրիկը պլըշ-պլըշ դիտում է իր շրջապատը՝ դաշտը, ծովը, անապատում մոլորեաձ, հարց է տալի բամբիներին թէ ինչ է մեր վիճակը, ո՞վ է մեր տէրը... Իսկ անապատը, կարծես ծաղրելով, հարցերը կրկնում է պղտոր ու մռայլ...

Գարաւ է մարդը, այս ծարաւից է ժայռեր ջարդում և աղբիւր բացում: Սրտի ու մտքի ծարաւը միակ կարող է մղել մեզ դէպի իմացական աղբիւրը: Սաւաւրի մէջ է ծագում ձգտումն դէպի լոյս, և խաւար անկիւնից է որոշում ահեղ տիեզերքի խորքում պլպլող լուսատու փրկարար աստղը...

է

Գիտնական ու մասնագէտ մարդիկ շատ անգամ ուսումնասիրում են բնական երևոյթները ոչ թէ ճշմարտութեան ծարաւը յագեցնելու համար, այլ որևէ գործնական գիւտ անելու նպատակով: Սերբին սրանց անմիջական նպատակը այն չէ, որ պարզեն տիեզերական գաղտնիքները կամ մարդկային կեանքի հանելուկը: Նրանք կամենում են միմիայն հեշտութիւն ու յարմարութիւն ստեղծել ապրուստի համար: Սրանք գիտնական արհեստաւորներ են, որոնք յաճախ մեծամեծ բարիքներ են պատրաստում մարդկանց համար: Բայց կան և իսկական փիլիսոփայ գիտնականներ, որոնք ուսումնասիրում են տիեզերական երևոյթները յատկապէս այն նպատակով, որ լուսաբանեն մարդկային սիրտը տանջող հարցերը:

Դէմ չլինելով արհեստաւոր գիտնականաց

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
2007-ՏՎԱԿԱՆ
ՍՏ. Ա. ՄԱՍԻՍԻԱՆ
Ա. ԵՍԱՄԲԱՐՅԱՆԻ ԱՆՈՒՄ
36 20 84

գործունէութեան, դէմ չենք և այն մարդուն որը զիտումէ երևոյթները և մտաւոր պաշար ձեռք բերում իր գործնական նպատակի համար: Միայն կամենում ենք, որ մէկ բանը միւսի հետ չը շփոթեն. ուրիշ բան է գործնական հմտութիւնը, ուրիշ է բուն մտաւոր զարգացումը, մտաւորապէս զարգացած մարդ կարող է համարուել միայն նա, ով ճշմարտութիւն որոնելով ձեռք է բերել մի խոր ու լայն աշխարհայեացք, որով և ղեկավարուում է իր կեանքի ու գործունէութեան ասպարիզում:

Իրականութեան մէջ շատ սակաւաթիւ են այն պիտիները, որոնք մի ամբողջական լուրջ աշխարհայեացք ունեն. իսկ բազմութիւնը հօտային բնագոտումով գնում է նրանց ետքից: Մենք բնաւ հակառակ չենք որ մարդիկ միութիւններ կազմելով միահամուռ ոյժերով հետևեն իրանց բարի նպատակներին, միայն ցանկանում ենք որ միութիւններին անդամակցողները գիտակցաբար վերաբերեն դէպի իրանց պարտաւորութիւնը և իրաւունքը:

Բայց մի լուրջ աշխարհայեացք ձեռք բերու համար հարկաւոր է ուսումնասիրել բնութիւնը և կեանքը, որքան այդ հնարաւոր է մարդկային օրգանիզմի համար: Ասում են թէ մարդու համար անկարելի է ամեն բան ըմբռնել, անհնար է պարզել բնութեան բոլոր գաղտնիքները: Սակայն այստեղ հարց է ծագում թէ արդեօք որտեղ է այն սահմանը, որ մարդկային միտքը կամայ-ակամայ պիտի կանգ առնէ, որտեղից դէնը ուրեմն չեն կարող թափանցել նոյնիսկ ամենահանճարեղ անհատները: Տասնութերորդ դարի վերջերին ֆրանսիական փիլիսօփայ Օգիւստ Կօնտ, որը համարուում է սօցիօլօգիայի և զրական փիլիսօփայութեան հիմնադիրը, փորձեց որոշել մտքի սահմանները: Կօնտը պնդում էր թէ կան հարցեր, որոնց միանգամայն իզուր են հրապարակ գցում բնագանցասէր փիլիսօփաները, քանի որ այդ հարցերը ընդմիջապէս պիտի անպատասխան մնան: Անհնարին է, հաւատաց նուձէր նա, իմանալ թէ ինչ նիւթերից է բաղկացած այս կամ այն աստղը: Բայց նրա մա

հից քիչ յետոյ գիտնականները գտան լուսալուծութեան մէտօղը. ճառագայթները խոշորացոյցի տակ քննելով կարողանում են որոշել թէ ինչ նիւթերից է բաղկացած այն երկնային մարմինը, որից ստացւում է քննող ճառագայթը. ուրեմն ո՞ւր մնաց կօնաի գրած սահմանը:

Մտքի թիւերը կաշկանդում է և այն համագամանքը, որ մեր զգայարանները սահմանափակ են: Մեր ականջներին անլսելի են թէ չափազանց ցածր և թէ չափազանց բարձր ձայները: Մեր աչքերը այնքան թոյլ են, որ բազմատեսակ կարևոր կենդանիներ միանգամայն անտեսանելի են մեզ համար: Բայց և այնպէս միտքը կանգ չէ առնում: Եթա որ մեր զգայարանները ժառանգաբար աւելի նրբանում են: Միւս կողմից, խոշորացոյցը, հեռագիտակը և ձայնափողը ապացոյց են, որ արհեստական միջոցներով կարելի է շարունակ ընդարձակել զգացողական տպաւորութիւնների ասպարէզը:

Ասացինք որ ինքնագարգացմամբ պարապողը աշխատելու է ուսումնասիրել բնութիւնը և կեանքը. լայն և խոր կերպով: Ուսումնասիրութեան լայնութիւնը պահանջում է չը բաւականանալ բնութեան մի շրջանով կամ կեանքի մի ասպարիզով, այլ ուշադրութեան առնել բոլոր երևոյթները: Իսկ խորութիւն ասելով հասկացւում է այն որ չը պէտք է կանգ առնել առարկաների մակերևոյթի վրա այլ հարկաւոր է թափանցել ներսը. քննել երևոյթների պատճառները և նոյն իսկ պատճառների պատճառները:

Բայց ինչից սկսել, ո՞ր առարկայի հետ ծանօթանալ առաջ և որի հետ յետոյ: Այդ իսկապէս միևնոյն է. արէք ինչպէս յարմար կը գտնէք իւրաքանչիւրիդ համար: Առարկաների այն դասաւորումը որ ընդունւած է դպրոցական ծրագիրներով, բռնազրօսիկ են և

առանձին կարևորութիւն չունեն նոյն իսկ աշակերտների համար: Ո՞վ կարող է ապացուցել որ սկզբնական դպրոցում, ուր անցնում են թւարանութիւն և քերականութիւն, անկարելի է անցնել հոգեբանութիւն կամ թէ հասարակագիտութիւն, քանի որ մանուկները հէնց իրն է հոգեբաններ և հասարակագէտներ են: Այսպէս թէ այնպէս, ինքնազարգացմամբ պարագոյր երիտասարդի համար մատչելի են անխափր բոլոր առարկաները և նա կարող է սկսել ինչից կամենայ:

Անհրաժեշտ չը համարելով առարկաների զասաւորութեան սխտեմը, այնուամենայնիւ կարևոր ենք գտնում, որ ինքնազարգացմամբ պարագոյր նախապէս մի ընդհանուր գաղափար ունենայ իր ուսումնասիրելիք լայնատարած ասպարէզի մասին: Մարդկային ուսումնասիրութեան ամբողջ ասպարէզում կարելի է որոշել երկու շրջան.

1. Բնութիւնը ինքնըստինքեան, այսինքն առանց մարդու միջամտութեան և ազդեցութեան: Դեռ մարդը գոյութիւն չէ ունեցել,

երբ աշխարհը և ընդհանուր տիեզերքը կային: Այժմ էլ ամենայն օր տեսնում ենք, թէ ինչպէս բնութեան մէջ տեղի են ունենում բազմատեսակ երևոյթներ. օրինակ՝ արեգակի և լուսնի խաւարումն, փոթորիկ, երկրաշարժ, որոնք ամենեւին կախած չեն մարդու կասքից և չեն ենթարկւում նրա ազդեցութեան: Ահա այս կարգի երևոյթների շրջանն է որ կոչւում է բնութիւն նեղ մտքով:

2. Կեանքը, այսինքն այն բոլոր շարժուցութիւնը կամ գործողութիւնը, որ կատարւում է արդէն մարդու կամքով, նրա ընդունակութիւնների շնորհիւ, մի խօսքով, այն բոլորը, ինչոր արդէն գլխաւորապէս մարդու սեփական ստեղծագործութեան և աշխատանքի արդիւնք է: Բնութեան մէջ չկան պատրաստ տներ, քաղաքներ, նաւեր, երկաթուղի, ... սրանք բոլորը արդէն մարդու մտքի և ձեռքի բերք է: Մարդն է ծնել ամբողջ անտեսական կապիտալը: Մարդու արժանաւոր սեփականութիւնն է գեղարեստի գմայլուն աշխարհը իր բազմաբովանդակ ճիւղերով...

Ուրեմն ուսումնասիրութեան առարկան լի ներու է մի կողմից բնութիւնը, իսկ միւսից կեանքը: Մինքը մարդը կանգնած է երկու շրջանների մէջտեղում, սահմանի վրա, որովհետեւ նա ինքը իր մարմնական կազմով և հոգեկան ոյժերով բնութեան մի հրաշալի ծաղիկն է: Բայց այս ծաղիկը ինքն էլ իր հերթին հրաշագործ է հանդիսացել և մի նոր աշխարհ է կառուցել, որին թերեւս աստուածներն էլ կը նախանձէին: Հարկաւ մարդը ոչ ինչ չէր կարող անել, եթէ նախապէս բնութիւնից օժտւած չլինէր և եթէ ձեռքի տակ չունենար բնութեան նախապատրաստած ոյժերը և նիւթերը: Մարդը ոչինչ է առանց բնութեան, բայց կարծես թէ բնութիւնն էլ իրստ մեղամաղձոտ կերպարանը կունենար, եթէ մարդը չլինէր: Բնութիւնը կը նմանէր զաւակ ունենալու տնէջով տոգորւած ամուլ գեղեցկուհուն...

Է

Մենք ակնարկել ենք, որ առհասարակ մեզ դուր չեն գալիս պարտաւորիչ կանօնները կրթութեան ասպարիզում: Դուք կարող էք այսօր դիտել մի ֆիզիկական երևոյթ, վաղը աստղաբաշխական, երբորդ օրը տնտեսագիտական և այսպէս ազատ կերպով շարունակել, միայն թէ Ձեր դիտողութիւնները պիտի լինին լուրջ և ըստ կարելոյն ճշգրիտ և պարզ: Ունենալով ճշմարտութեան ծարաւ և շիտակ մտածողութիւն, Դուք կամայ թէ ակամայ կը կապկըպէք, կը շլթայէք իրար հետ: Ձեր ձեռք բերած նիւթերը և այսպիսով հետզհետէ կունենար մի լուսաւոր աշխարհայեացք: Դուք նմանելու էք ճաշակ և եռանդ ունեցող այն ազնիւ մարդուն, որ կամենում է կառուցել իր համար մի կախարդական հմայիչ պալատ, նա իր փոքրիկ միջոցներով գնում է պալատի հիմքը: Եւ ահա պա

լատը անընդհատ կառուցումէ, շարունակ կատարելագործում : Մեր բարեկամը այնպէս է կազմել իր ծրագիրը, որ ինքը իր պալատի մէջ ապրելով, շարունակում է ճոխացնել և գեղեցկացնել պալատը : Բարուի շրջակայքում պատահում է որ մի գիշերւայ մէջ մէկ բարաշէն տնակ են կառուցում . երեկոյեան դէմ հիմքը դնում են և դեռ արեւը չըծագած կտուրը ծածկում են, տան առաջ էլ միքանի թղենի են տնկում, որպէսզի միւս օրից քաղաքին հաւատացնեն թէ իրանց պապը բնակելիս է եղել սոյն այս տնակի մէջ, և այսպիսով գետինը զափտեն : Ինչ ասել կուզի, գաղտագողի մի գիշերւայ մէջ կառուցած տունը նոյնպէս շէնքս է : Բայց կէօլնի հրաշակերտ տաճարը ահա հարիւր տարի է որ շինում են և դեռ շարունակում են կատարելագործել :

Մեզ կ'առարկեն թէ ախր ինչպէս կարելի է իրականացնել այս բոլորը կեանքի մէջ և ո՞վ կարող է թողնել իր բանագործը, իր փողաբեր աշխատանքը և զբաղւել ինքնազարգացման անտոկոս գործով : Ֆաւոր սրտի

պիտի խոստովանենք, որ այս առարկութեան մէջ ճշմարտութիւն կայ, գոնէ ճշմարտութեան սաղմը նշմարում է : Բայց ահա թէ մենք ինչ պիտի ասենք այդ առարկութիւնը լրացնելու և շտկելու համար :

Առաջին. Շատ ու շատ երիտասարդներ այնքան էլ զբաղւած չեն գործնական աշխատանքով, բաւականաչափ ազատ ժամեր ունեն, միայն թէ այս ժամերը չարաչար վատնում են միանգամայն ունայն, անպատիւ, փնասակար կերպով, իբր թէ զւարճանում են : Թող թախաղ, ափեղցիւեղ կատակարանութիւն ծխախոտի ծխով թունաւորւած սենեակում, զբարտանք և բամբասանք բացակայ բարեկամների հասցէին, շոայլ կերուխում, լոտօ, և շատ աւելի վատթարները . . . Այս բոլորի մէջ իսկական զւարճութեան հետքն էլ չկայ . . .

Երկրորդ. Այն մարդը որ ճշմարտութեան ծարաւ ունի և ըմբռնում է մարդկային վիճակի ամբողջ ծանրութիւնը, հէնց իր գործնական աշխատանքների և զւարճութեանց միջոցին էլ պիտի անընդհատ սովորէ : Երբ, օրի

նակ, կար էք անում, կամ թէ հաց էք ուտում
չէ՞ որ միաժամանակ օդ էք շնչում: Մի վայր
կեան անգամ չէք կարող դիմանալ առանց
շնչառութեան. Ձեր թորերը պիտի գործեն
անդադար, եթէ ոչ՝ Ձեր արիւնը կը թունաւոր
ւի և Դուք խեղդամահ կլինէք: Ճիշտ նոյնն
է ներկայացնում և հոգեկան աշխարհը. մար
դը պիտի ունենայ հոգեկան անընդհատ շնչա
ռութիւն, եթէ ոչ նրա հոգեկան աշխարհը կը
թունաւորւի և նա խեղդամահ կլինի մտա
ւորապէս և բարոյապէս...

Թէ տանը, թէ փողոցում, թէ դաշտում, թէ
լեռների գագաթին մարդը գտնուումէ բնութե
ան ծոցում: Արջինս ծնող—մօր պէս մերթ
շոյումէ նրա ականջները քաղցրահնչիւն մե
ղեղիներով, մերթ իր քնքոյշ մատներով շփու
մէ նրա փափլիկ շրթունքը, որ պէսզի... Բնու
թեան անսպառ ծիծերը պատրաստ են իր
զաւակների համար, միայն թէ զաւակները
ըմբռնեն, տիրապետեն նրան, լիուլի անուշ
անն անդարար և կենսաբեր կաթը: Սակայն
զաւակները...

Ը

Ինչ եղանակով էլ ղեկավարէ ինքնա
զարգացմամբ պարապողը, այնուամենայնիւ
վաղ թէ ուշ պիտի գաղափար կազմէ բնու
թեան և կեանքի գիտութեան հետեւեալ ճիւ
ղաւորութիւնների մասին:

Նախ վերջենք բնութիւնը.

1. Մարդու մարմնի կազմը:

2. մարդու հոգեկան աշխարհը:

3. կենդանիների աշխարհը. կենդանիների
գանազան ցեղերը և նրանց կեանքը. կենդա
նիների հոգեբանութիւնը:

4. Բոյսերի աշխարհը. կազմաւածքը և ա
ճեցողութիւնը. կենդանիների և բոյսերի փո
խադարձ յարաբերութիւնները:

5. Նիւթերի աշխարհը. նիւթերի ֆիզիկա
կան և իրմիկական կազմը և յատկութիւն
ները:

6. Բնութեան մէջ եղած ոյժերը, օրինակ,

ջերմութիւնը, մագնիսականութիւնը, էլէկտրականութիւնը, լոյսը: Այժերի ներգործման օրէնքները: Այժերի փոխակերպութիւնները (օրինակ, տաքութիւնը որոշ պայմաններում առաջ է բերում լոյս կամ էլէկտրականութիւն):

7. Մթնոլորտ՝ օդի բաղադրութիւնը, յատկութիւնները, անձրև, ձիւն, կարկուտ, քամի...:

8. Երկրագունդը, նրա կեղևը և ներքին դրութիւնը: Երկրագնդի ծագումը և անցած շրջանները: Նրա դիրքը արեգակի շրջանում: Լուսինը, նրա կազմը, մակերևոյթը և դիրքը:

9. Արեգակը և նրանից կախած երկնային մարմինները (մոլորակները): Առանձին ուշադրութեան արժանի է Մարս մոլորակը, ուր հաւանօրէն գոյութիւն ունի որոշ օրգանական կեանք:

10. Աստղալից երկինքը, այսինքն առհասարակ տիեզերքի ամբողջ կազմը:

Դառնալով այժմ դէպի բուն կեանքի գիտութիւնը, կրկին պիտի սկսենք մարդուց, որովհետև նա է կանգնած բնութեան և կեանքի սահմանի վրա:

Կեանքի գիտութիւնը.

1. Մարդու ընկերական բնազդը, մօր և զաւակների փոխադարձ սէրը: Տնտեսական գործունէութեան սկիզբը: Բնտանիքի զարգացման պատմութիւնը: Համայնք, ցեղ, ազգ:

2. Հասարակութիւնը որպէս ուսումնասիրելու առարկայ: Ազգերի հոգեբանութիւնը: Պրօգրէսի էութիւնը: Բնդհանուր հասարակական հիմնարկութիւնները: Հասարակական օրգանիզմի մէջ կատարուող ֆիզիօլօգիական և հոգեբանական պրօցէսները:

3. Տնտեսական աշխարհ: Չեքրի և արհեստի զարգացումը: Գործարանների դրական և բացասական յատկութիւնները: Բանւորական հարց: Տնտեսական ձեւերի ազդեցութիւնը կեանքի և մտքի վրա:

4. Պետութիւն: Օրէնսդրութիւն: Միջազգային յարաբերութիւններ:

5. Բարիի և չարի գաղափարը: Կրօնի ծագումը: Բարոյական սկզբունքների զարգացումը: Առանձին ուշադրութիւն է պահանջուի քրիստոնէական կրօնը:

6. Գեղեցիկ արեստների ծագումը նրանցից իւրաքանչիւրի զարգացման պատմութիւնը: Գեղարեստի ճիւղերը:

7. Փիլիսօփայական մտածողութեան և առհասարակ գիտութեան առաջ գալը և ճիւղաւորելը: Գիտական մէտօդներ: Տրամարանութիւն: Մատիմատիկ:

8. Սխտեմատիկ աշխարահայեացքի նորագոյն փորձերը: Սպէնսէր, Տօլստօյ, Նիտշէ: Կատարելագործութեան օրէնքը և գերամարդի գաղափարը:

Նոյն հեղինակի առանձին լոյս տեսած

ինքնուրոյն աշխատութիւնները:

1. Վէպիկներ 20 Կ.
2. Ընտանիքի կեանքը 20 Կ.
3. Արհեստագործութիւն 40 Կ.
4. Գէօտէյի կենսագրութիւնը 30 Կ.
5. Աւազակներ, ամիրոփ պատմած 15 Կ.
6. Վիլհէլմ Տէլլ, նոյնպէս 15 Կ.
7. Օրլէանի կոյսը, նոյնպէս 20 Կ.
8. Բանաստեղծ—իդէալիստ Շիլլեր, ուսու-
մնասիրութիւն ըննական կենսագ. 3 թուր
9. Թագնւած կայծեր, զրամա, 5 Գ 1 թուր

Պատրաստ տպագրութեան.

Թառայեանց. Արշալոյս, զրամա, 5 գործ.

» Ազրայիլ, տրագիկոմ, 5 —

» Սոկրատէս, պ. զրամ, 4 —

Մեր գրքերը և հասցէն կարելի է ստա-
նալ հայ գրավաճառներից:

« Ազգային գրադարան



NL0222497

52.192